



**«Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում  
դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը»  
ծրագիր**

**Արբիտրաժային ամառային դպրոցի մասնակցության հայտերի ընդունում**

Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից՝ Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ II) ծրագրային ձևաչափի շրջանակներում ֆինանսավորվող և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը» ծրագիրը և Հայաստանի Հանրապետության արբիտրների ասոցիացիան հնարավորություն են ընձեռում Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավաբանական ֆակուլտետների ուսանողներին մասնակցել արբիտրաժային ամառային դպրոցին:

Քառօրյա ինտենսիվ ամառային դպրոցի նպատակն է նպաստել արբիտրաժի վերաբերյալ Երևանի և Հայաստանի մարզերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների գիտելիքների և գործնական հմտությունների զարգացմանը՝ քննարկումների, գործերի քննությունների և դերախաղերի միջոցով: Արբիտրաժի վերաբերյալ տեսական գիտելիքներ ապահովելուց զատ, ամառային դպրոցը մասնակիցներին հնարավորություն կընձեռի կիրառել ձեռք բերված գիտելիքները դերախաղերի և իրավիճակային մոդելավորումների միջոցով: Ամառային դպրոցի դասերը վարելու են փորձագետները՝ շեշտը դնելով քննարկումների և գործնական պարապմունքների վրա, ինչն ուսանողներին հնարավորություն կտա ձեռք բերել այս ոլորտում աշխատելու համար անհրաժեշտ հմտություններ:

Թեմայի վերաբերյալ հետաքրքրություն ունեցող իրավաբանական ֆակուլտետների ուսանողներին հրավիրում ենք ներկայացնել իրենց հայտերն արբիտրաժային ամառային դպրոցին մասնակցելու համար:

Մասնակիցները կընտրվեն «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության

ամրապնդումը» ծրագրի և Հայաստանի Հանրապետության արբիտրների ասոցիացիայի հետ համատեղ: Ընտրված մասնակիցների ակնկալվող թիվը 20 է:

**Ամառային դպրոցի անցկացման ամսաթիվը՝** 12-15 հուլիսի 2022 թվական:

**Ամառային դպրոցի անցկացման վայրը՝** Էլեգանտ Հյուրանոց և Ռեզորթ (Օաղկաձոր Տանձադրյուրի փող., 11 շենք):

**Դիմումատուների համապատասխանության չափանիշները՝** ամառային դպրոցին մասնակցության հայտ կարող են ներկայացնել Հայաստանի բոլոր բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողները:

**Ամառային դպրոցի պաշտոնական լեզու՝** հայերեն:

### **Դիմելու կարգը**

Հետաքրքրության նամակները կենսագրականի հետ մեկտեղ պետք է ուղարկել [tender.armenia-BH4714@coe.int](mailto:tender.armenia-BH4714@coe.int) էլեկտրոնային փոստի հասցեին **մինչև 2022 թ. հունիսի 26-ը՝ ժ. 18:00-ն:**

Ամառային դպրոցին մասնակցելու հայտ ներկայացրած ուսանողները կընտրվեն Երևանի և Հայաստանի մարզերի բոլոր ուսումնական հաստատությունների հավասար ներկայացվածության սկզբունքից ելնելով: Ծրագիրը կհոգա ընտրված մասնակիցների՝ ամառային դպրոցին մասնակցության բոլոր ծախսերը: